

ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴԸ ԲԵԹՂԵՏԷՄԻ ՄԷՁ



Սուրբ ծննդեան զարդարանքներն ու գիշերային լուսազարդերը Բեթղեհեմ քաղաքին տուած էին շքեղ տօնական տեսք: Ամբողջ քաղաքը կը ցնծար մեր Տիրոջ Յայտնութեան աւետիսով: Յունուար 18-ին հարիւրաւոր հայեր իրենց անձնական ինքնաշարժներով արդէն փութացած էին ներկայ գտնուելու մերձակայ հրապարակի տարածքին Ամեն. Պատրիարք Տ. Նուրհան Արք. Մանուկեանի շքախումբին ժամանումին: Առաւօտեան ժամը 11-ին մեր հայ արի-արենոյններու փողերախումբի հնչիւններու ներքոյ, ապա «Խորհուրդ Մեծ» շարականի երգեցողութեամբ՝ Բեթղեհեմի հրապարակի մուտքին թափօրը դիմատրուեցաւ քաղաքապետին եւ իր աւագանիին կողմէ:

Ամեն. Պատրիարք Տօր դիմատրեցին Պաղեստինեան կառավարութեան Զբօսաշրջութեան նախարար Ազն. Տիկ. Ռուպ Մաայա, Պեթղեհեմի կառավարիչ Տիար Հիպրին ալ-Պաքրի եւ քաղաքապետ Ազն. Տիկ. Վերա Պապուն, Պեթղեհեմի ոստիկանութեան Ընդհ. Տնօրէն Ալաա Շալապի եւ նախագահ Մահմուտ Ապպասի քրիստոնէական գործերու խորհրդական Տիար Զիատ ալ-Պանտաք:

Քիչ ատելի ուշ ժամանեց նաեւ նախագահ Մահմուտ Ապպաս:

Երեկոյեան Ամեն. Պատրիարք Տօր գլխատրութեամբ Ս. Ծննդեան Տաճարի մուտքէն ետք կատարուեցաւ Հրազաւոյցի հոգեպարար արարողութիւնը, որմէ ետք Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Այրին մէջ, ուրկէ հայերէն եւ արաբերէն լեզուներով Իր պատգամը տուաւ Ամեն. Պատրիարք Հայրը: Պաղեստինեան ձայնասփիւռը մօտ ժամ մը ձայնասփռեց Ս. Այրի արարողութիւնը:

Յաջորդ օրը, Յունուար 19-ի լուսադէմի ժամը 1:00-ին, կատարուեցաւ Զրօքիւնէք, իսկ ժամը 4:00-ին՝ Ս. Պատարագ:

ՄՈՎՍԷՍ ԻՌԵՆԵԱՅԻ

ԻՌԵՆԵԱՅԻ ՄԵՍ ԵՒ ՍԳԱՆՉԵԼԻ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի,
Որ յայտն աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս,
Տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ
Ի Բեթղեհեմ քաղաքի
Որդի՛ք մարդկան, օրհնեցէ՛ք,
Զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի
Ի խանձարուրս պատեցաւ,
Ո՛չ մեկնելով ի հօրէ՛
Ի սուրբ այրին բազմեցաւ:

